Իսկական խոստմնագիրն յայտարարութեանս հետ յ31 յունվ. 1888 ամի հմ. 50. ընդ նմին և խմբագրած կանոնագրութիւնն ուղարկելով Վ.եհ. Կաթուղիկոսին խնդրեցի տնօրէնութիւն խոստմնագրի կատարման համար և կանոնագրութեան հաստատման և վաւերացուցման համար. և ահա յայտարարութեանս պատճէնն։

հմ. 50 յ31 Յունվ. 1888 թ.

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն (Կաթուղիկոսի Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

յԱռաջնորդէ Հայոց Թեմին Շամախւոյ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

,,Ես ի կատարել զյօդուած պաշտելի Կոնդակի Ձերդ օծութեան տուելոյ ի 15 հոկտ. անցեալ ամի հմ. 522, որով պատուիրէիք «Առընթեր նմին վանից Սաղխանի պահպանել զվանական զպրոց մի առ մի պատրաստել զարժանաւոր պաշտօնեայս, և սպասաւորս»: Թղթակցեցայ ընդ գործակալին եկեղեցեաց Բագուայ Արժան. Խորէն Աւագ քահանայի ի գտանել զբարեպաշտ անձինս յօժանդակութիւն կառավարութեան այնմիկ վանական զպրոցին, և ահա յայսմ ամսեանն յունվարի ընկալայ պատասխանի Նամակ նորին, որ աւետէր զհամաձայնութիւն եղբարց Բուդաղեանց ապահովելոյ զայն վանական դըպրոցն. ուստի և ուղղեցի զթղթակցութիւնս առ յիշեալ Բուդաղեան եղբարս, յորոց՝ յետ ստանալոյ զկատարեալ համաձայնութիւն առ այն՝ ապա առաքեցի զպարոն Ատենադպիրն Կոնսիստորին Շամախւոյ անդր ի Բագու քաղաք, ի բանակցութիւն ընդ Բուդաղեան եղբարս, որոյ՝ յետ բացատրելոյ նոցա զկանոնագրութիւնս վանական զպրոցին յինէն խմբագրեալն, ստացաւ և եբեր զխոստմնագիրն եղբարց Բուդաղեանց վասն տասն հազար րուբլեօք ապահովելոյ զայն զպրոցն։

,, Զիսկական խոստմագիրն Բուդաղեան եղբարց գրեալ յա-